ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
թիվ 4

«Գավառի պետական համալսարան» հիմնադրամի կարիքների համար տնտեսական ապրանքներ ձեռք բերելու նպատակով հայտարարված «ԳՊՀ-ԷԱՃ-ԱՊՁԲ-22/04» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Գավառ 19 մարտի 2022թ.

Սույն թվականի մարտի 19-ին ժամը 11.00-ին «Գավառի պետական համալսարան» հիմնադրամում՝ ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1 հասցեում, տեղի ունեցավ համալսարանի կարիքների համար տնտեսական ապրանքներ ձեռք բերելու նպատակով հայտարարված «ԳՊՀ-ԷԱՃ-ԱՊՁԲ-22/04» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի արդյունքների ամփոփման հանձնաժողովի նիստ:

Նիստին մասնակցում էին հանձնաժողովի նախագահ Ն. Ա. Կուտուզյանը, հաձնաժողովի անդամներ՝ Գ. Ն. Աբրահամյանը և Ս. Ռ. Գասպարյանը:

Հանձնաժողովի քարտուղարը զեկուցեց, որ ընտրված մասնակիցներ ճանաչված, «Մեծ Ծիածան» և «Սոֆթ Թրեյդ» ՍՊԸ-ների կողմից պայմանագրերի նախագծերի հաստատումները և որակավորումների ու պայամանագրերի ապահովումները ներկայացնելու մասին:

Հանձնաժողովը գնահատման թերթիկների հիման վրա գնահատեց, որ պայմանագրերի նախագծերի հաստատումները, որակավորումների ու պայամանագրերի ապահովումները կազմվել և ներկայացվել են սահմանված կարգով և ժամկետներում:

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի պահանջներով՝ հանձնաժողովը

որոշեց՝

a) 2-րդ և 3-րդ չափաբաժիններով ընտրված մասնակից ճանաչել «Սոֆթ Թրեյդ» ՍՊԸ-ին և «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի ու «Սոֆթ Թրեյդ» ՍՊԸ-ի միջև 2022 թվականի մարտի 19-ին կնքել տնտեսական ապրանքների մատակարման «ԳՊՀ-ԷԱՃ-ԱՊՁԲ-22/04(1)» ծածկագրով գնման պայմանագիր, որի ընդհանուր գումարը կազմում է 64.348,80 (վաթսունչորս հազար երեք հարյուր քառասունութ ամբողջ ութսուն) ՀՀ դրամ:

b) 4-րդ և 5-րդ չափաբաժիններով ընտրված մասնակից ճանաչել «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ին և «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի ու «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ի միջև 2022 թվականի մարտի 19-ին կնքել տնտեսական ապրանքների մատակարման «ԳՊՀ-ԷԱՃ-ԱՊՁԲ-22/04(2)» ծածկագրով գնման պայմանագիր, որի ընդհանուր գումարը կազմում է 78.410,00 (յոթանասունութ հազար չորս հարյուր տասը) ՀՀ դրամ:

Որոշումն ընդունվել է կողմ՝ 3 և դեմ՝ 0:

հանձանաժողովի նախագահ Ն. Ա. Կուտուզյան

հանձանաժողովի անդամ՝ Ս. Ռ. Գասպարյան

հանձանաժողովի անդամ՝ Գ. Ն. Աբրահամյան

հանձանաժողովի քարտուղար՝ Ս. Բ. Ղարաբաղցյան